ՀՀ Վարչական դատարանին

Հայցվոր՝
“Ինֆորմացիայի ազատության կենտրոն”
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյդոյան
ՀՎՀՀ՝ 02568394
ՊԳՎ՝ թիվ 211 171 01863
Հասցե՝ Երեւան 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 010 56 03 60, e-mail: foi@foi.am

Ներկայացուցիչ՝
Գեւորգ Ղուկասի Հայրապետյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 0054, Դավթաշեն 1-ին թ., 51շ., 56բն.
Հեռախոս՝ 099 11 30 99

Ծանուցման հասցե՝
ՀՀ, ք. Երեւան 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Պատասխանողներ՝
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 375010, Նալբանդյան փ. 104,

ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 375010, Նալբանդյան փ. 104,

Հայցադիմումը ներկայացվել է առձեռն

# Հայց

## տեղեկատվություն ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին

ՀՀ վարչական դատարանին ենք դիմում՝ իրացնելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով երաշխավորված, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ եւ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի (հետայսու՝ նաեւ Օրենք) 11-րդ հոդվածով ձեւակերպված մեր հոդվածով ձեւակերպված դատական պաշտպանության իրավունքը:

1. **Հայցի էության հակիրճ նկարագրությունը**

1.1. ՀՀ քաղաքաշինության նախարարությունից (այսուհետ՝ նաեւ Նախարարություն) տեղեկատվություն ստանալու հարցումներով պահանջել ենք 2012թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները: ՀՀ քաղաքաշինության նախարարությունը մերժել է տրամադրել պահանջված տեղեկությունները: Սույն հայցով խնդրվում է ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն ստանալո իրավունքի խախտման փաստի ճանաչում եւ տեղեկություն ստանալու իրավունքների վերականգնում:

2. **Փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը**

2.1. 2013թ.-ի ապրիլի 3-ին թիվ 196-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (այսուհետ՝ նաեւ ԻԱԿ) դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանին:

2.2. Հարցմամբ Նախարարությունից խնդրվել էր տրամադրել 2012թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները:

2.3. Հարցումը Նախարարությանն ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2013թ.-ի ապրիլի 3-ին:

2.4. 2013թ.-ի ապրիլի 3-ի թիվ 196-8 հարցմանն ի պատասխան Նախարարությունից ստացվել է 2013թ.-ի ապրիլի 18 թվագրված գրություն:

2.5. Նախարարության գրությունն ունեցել է հետեւյալ բովանդակությունը.

2.5.1. “Հաշվի առնելով “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկատվության ազատության սահմանափակումները՝ հայտնում եմ, որ 2012 թվականի երկրորդ կիսամյակում նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների համար կնքվել են թվով 19 պայմանագիր՝ մոտ 8 մլն. դրամի շրջանակներում: Գնումներից յուրաքանչյուրի պայմանագրային գումարը չի գերազանցում մեկ միլիոն դրամը, որը “Գնումների մասին” ՀՀ օրենքի համաձայն ենթակա չէ հրապարակման:

Ձեր իսկ մատնանշած “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին կետի համաձայն. “Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա՝

1) Պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք”:

Այս դեպքում պայմանագրերի պատճենների տրամադրումը տվյալ ընկերության համար հանդիսանում է առեւտրային գաղտնիք, որը կարող

ենք տրամադրել միայն նրանց համաձայնության դեպքում: Այս սահմանափակման մասին ամրագրված է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ եւ “Բանկային գաղտնիքի մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներում”:

2.6. 2013թ.-ի հունիսի 24-ին թիվ 201-7 տեղեկություն ստանալու գրավոր կրկնակի հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀԿ-ն նորից դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանին:

2.7. Կրկնակի հարցմամբ ԻԱԿ-ը Նախարարությանը հայտնել է, որ.

2.7.1. “Գտնում ենք, որ նախարարության մերժումն անհիմն է, քանի որ, մի կողմից, խոսքը գնում է պետական գնումների եւ պետական բյուջեից ծախսվող գումարների մասին, մյուս կողմից՝ մեկ անձից կատարված գնումների պայմանագրերը հրապարակային փաստաթղթեր են, բազմիցս (տարբեր տարիների համար) հրապարակվել են տարբեր մարմինների, այդ թվում՝ բոլոր նախարարությունների կողմից: Ուստի, չի կարող պայմանագրում կազմակերպության վերաբերյալ տեղեկությունը մի դեպքում համարվել գաղտնիք, մյուս դեպքում՝ ոչ: Սահմանափակումը կամ հրապարակայնությունը պետք է հավասարապես կիրառելի լինի բոլոր համանման դեպքերում, իսկ օրենքը պետք է լինի կանխատեսելի եւ կիրառվի միատեսակ:”:

2.8. Կրկնակի հարցմամբ ԻԱԿ-ը եւս մեկ անգամ խնդրել է տրամադրել 2013թ.-ի ապրիլի 3-ի թիվ 196-8 հարցմամբ խնդրվող տեղեկությունները:

2.9. Կրկնակի հարցումը Նախարարությանն ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2013թ.- ի հունիսի 24-ին:

2.10. 2013թ.-ի հունիսի 24-ի թիվ 201-7 հարցմանն ի պատասխան Նախարարությունից ստացվել է 2013թ.-ի հուլիսի 12 թվագրված գրություն:

2.11. Նախարարության գրությունն ունեցել է հետեւյալ բովանդակությունը.

2.11.1. “ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար 2012 թվականի երկրորդ կիսամյակում մեկ անձից կատարված գնումներով կնքվել է թվով 19 պայմանագիր՝ մոտ ութ միլիոն դրամի շրջանակներում: Կնքված յուրաքանչյուր պայմանագրի գինը չի գերազանցում մեկ միլիոն դրամը, որը “Գնումների մասին” ՀՀ օրենքի համաձայն ենթակա չէ հրապարակման:
Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայավում է կից ցանկով
Առդիր՝ 1 էջ”:

2.12. Նախարարությունը կից գրությամբ ներկայացրել է թվով 16 պայմանագրերի կողմ հանդիսացող կազմակերպությունների անվանումը եւ պայմագրերով համապատասխան գնման անվանումը:

## 3. Հայցի իրավական հիմքերը

3.1. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից”:

3.2. ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք”:

3.3. “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից”:

3.4. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը”:

3.5. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ “Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը”:

3.6. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ “Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը”:

3.7. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները”:

3.8. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-ին կետի համաձայն՝ “Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ”:

3.9. Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ “Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը”:

3.10. Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ “Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ … տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն…”:

3.11. “Գնումների մասին” ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է՝ “1) պատվիրատու՝

ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետության կամ համայնքների հիմնարկներ” :

3.12. “Գնումների մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ “Պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում”:

3.13. ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները…”:

3.14. ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ “Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որեւէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը”:

3.15. ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ “Վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետեւանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետեւանքով”:

3.16. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի համաձայն. “Օրենքով նախատեսված տեղեկությունը … հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով":

3.17. Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են՝ սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով,

3.18. Նույն օրենսգրքի 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի … 189.7 հոդվածներով … նախատեսված դեպքերում»:

3.19. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26 գլխում ներառված՝ 151 հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով”:

## 4. Հայցի փաստարկները

4.1. Սույն հայցով ներկայացված փաստական հանգամանքներից հստակ է, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու հարցումներով փնտրել է տեղեկատվություն, սակայն այն չի ստացել: Հետեւաբար, ակնհայտորեն տեղի է ունեցել ԻԱԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն ստանալու իրավունքի միջամտություն: Ուստի, հարկ է պարզել՝ արդյոք այդ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, թե՝ ոչ:

4.2. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 03.04.2013թ.-ի թիվ 196-ի 8 հարցմանը Նախարարության տրամադրած պատասխանի բովանդակությունից հստակ է, որ Նախարարությունը, հղելով "Գնումների մասին" ՀՀ օրենքին, պնդում է, որ պահանջված պայմանագրերից ոչ մեկը չի գերազանցում մեկ միլիոն դրամը, հետեւաբար ենթակա չեն հրապարակման: "Գնումների մասին" ՀՀ օրենքը չի պարունակում որեւէ նորմ, որը կդներ իմպերատիվ արգելք՝ մեկ միլիոն դրամը չգերազանցող պայմանագրերի հրապարակման համար: Ավելին, "Գնումների մասին" ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առումով ՀՀ քաղաքաշինության նախարարությունը գնումների գործընթացում համարվում է պատվիրատու, իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետը պարտադրում է պատվիրատուին գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում:

4.3. "Գնումների մասին" ՀՀ օրենքի վերնշյալ դրույթը արտացոլում է "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքով տեղեկություն տնօրինողի, տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության վրա դրված պարտականությունը՝ սեփական նախաձեռնությամբ տեղեկություն հրապարակելու պարտականության բացակայության դեպքում տեղեկությունը տրամադրել յուրաքանչյուր հայցողին՝ բացառությամբ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված սահմանափակումների դեպքում: Ուստի, ՀՀ քաղաքաշինության Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված եւ "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքում ամրագրված՝ տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներն ապահովելու համար պարտավոր էր կատարել

4.3.1. "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված գործողություններից որեւէ մեկը,

կամ

4.3.2. նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որեւէ մեկը, ընդ որում՝ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

4.4. 4.2.1. դեպքում խոսքը գնում է հայցվող տեղեկատվությունն ըստ էության տրամադրելու մասին, երբ ըստ Օրենքի Նախարարությունը պարտավոր էր կամ

տրամադրել հարցմամբ պահանջված տեղեկությունը, կամ, հայցվող տեղեկությունը հրապարակված լինելու դեպքում, տրամադրել տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը (հղում կատարել տեղեկատվության աղբյուրին):

4.5. 4.2.2. դեպքում խոսքը գնում է հայցվող տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին, երբ ըստ Օրենքի Նախարարությունը պարտավոր էր Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության դեպքում մերժել պահանջվող տեղեկության տրամադրումը, կամ, եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն է պարունակում տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն տրամադրեր մնացած մասի վերաբերյալ, իսկ մնացած մասով մերժեր:

4.6. ԻԱԿ-ի հարցումներին Նախարարության կողմից տրված պատասխան գրությունների բովանդակությունից հստակ է, որ Նախարարությունը “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի իմաստով տրամադրել է մերժում:

4.7. Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին գրավոր պետք է հայտի դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը: Այնինչ, ԻԱԿ-ի՝ 03.04.2013թ.-ի թիվ 196-ի 8 հարցմանը Նախարարության տրամադրած պատասխանում ներկայացված չէ մերժման բողոքարկման կարգը, իսկ ԻԱԿ-ի՝ 24.06.2013թ.-ի թիվ 201-ի 7 հարցմանը Նախարարության տրամադրած պատասխանում ներկայացված չեն ոչ մերժման հիմք հանդիսացող օրենքի համապատասխան նորմը, ոչ էլ մերժման բողոքարկման կարգը: Ուստի, Նախարարության մերժումը ոչ իրավաչափ է:

4.8. Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ ակետը սահմանում է նաեւ, որ տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տնօրինողն այդ մասին գրավոր պետք է հայտի դիմողին 5-օրյա ժամկետում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարցումները ներկայացրել է պատվիրված նամակով: Տվյալ պարագայում, ըստ Հայստ ծառայության, հասցեատերը նամակը ստանում է նամակն ուղարկելուց 1 կամ 2 օր հետո: Թիվ 196-8 հարցումն ԻԱԿ-ը ուղարկել է 03.04.2013թ.-ին, սակայն Նախարարությունն այս հարցման պատասխան գրությունն ուղարկել է հարցումն ուղարկելուց 16 օր անց՝ 19.04.2013թ.-ին: Թիվ 201-7 հարցումն ԻԱԿ-ը ուղարկել է 24.06.2013թ.-ին, սակայն Նախարարությունն այս հարցման պատասխան գրությունն ուղարկել է հարցումն ուղարկելուց 19 օր անց՝12.07.2013թ.-ին: Այս փաստերը հաստատվում են Նախարարության ուղարկած նամակների ծրարների փոստային կնիքի ամսաթվերով: Հաշվի առնելով այն, որ պատվիրված նամակը հասցեատիրոջը հասցնելու համար փոստային ծառայությունից պահանջվում է 1-2 օր ժամանակ, գտնում ենք, որ Նախարարությունը պատասխան գրությունները ներկայացրել է Օրենքով դրա համար սահմանված 5-օրյա ժամկետի խախտմամբ, թույլ է տվել անգործություն, ինչը ոչ իրավաչափ է:

4.9. ՀՀ քաղաքաշինության նախարարությունը ԻԱԿ-ի՝ 03.04.2013թ.-ի թիվ 196-ի 8 հարցմանը տրամադրած պատասխանում որպես մերժման հիմք նշել է առեւտրային

գաղտնիքը՝ “Այս դեպքում պայմանագրերի պատճենների տրամադրումը տվյալ ընկերության համար հանդիսանում է առեւտրային գաղտնիք…”: Շարունակելով՝ Արդյունքում նախարարությունը չի տրամադրել որեւէ պայմանագրի պատճեն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածը սահմանում է, որ տեղեկատվությունը առեւտրային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առեւտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Այս պարագայում գտնում ենք, որ պայմանագիրն ինքնին եւ ամբողջությամբ չի կարող ունենալ առեւտրային նշանակություն: Իրական առեւտրային նշանակություն կարող են ունենալ պայմանագրում ներառված առանձին տեղեկությունները: Այդ է վկայում հենց Նախարարության կողմից ԻԱԿ-ի հարցմանը տրված պատասխանը. ԻԱԿ-ի՝ 24.06.2013թ.-ի թիվ 201-ի 7 հարցման պատասխանին կից Նախարարության կողմից ներկայացվել է գրություն, որում ներկայացված են թվով 16 պայմանագրերի կողմ հանդիսացող կազմակերպությունների անվանումը եւ պայմագրերով համապատասխան գնման անվանումը: Ակնհայտ է, որ Նախարարության ներկայացրած տվյալներից յուրաքանչյուրը ներառված է եղել համապատասխան պայմանագրի տեքստում, սակայն իր պատասխանի կից գրությամբ Նախարարությունը դրանք տրամադրել է ԻԱԿ-ին: Այսպիսով, Նախարարությունը ԻԱԿ-ի կրկնակի հարցմանն ի պատասխան ներկայացրած կից գրությամբ հաստատել է, որ հենց ըստ Նախարարության՝ պայմանագրում ներառված ոչ բոլոր տեղեկություններն են, որ պարունակում են առեւտրային գաղտնիք, եւ տրամադրել է դրանք (կազմակերպությունների անվանումը եւ պայմագրերով համապատասխան գնման անվանումը): “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ “Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ”: Ուստի, իրավաչափ կլիներ, որ Նախարարությունը, առաջնորդվելով “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածով, ԻԱԿ-ի առաջին՝ 03.04.2013թ.-ի թիվ 196-ի 8 հարցմանն ի պատասխան տրամադրեր խնդրված տեղեկությունների այն մասը, որը ըստ Նախարարության գաղտնիք չի պարունակում: Վերոնշյալը Նախարարությունը չի արել, ինչը ոչ իրավաչափ է:

4.10. 4.7., 4.8. եւ 4.9. կետերում նշվածը ցույց է տալիս, որ ԻԱԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն ստանալու իրավունքի միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով, ուստի, Նախարարությունը խախտել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն ստանալու իրավունքը:

4.11. Գտնում ենք, որ Նախարարությունը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին պարտավոր էր տրամադրել հայցվող տեղեկությունները հետեւյալ հիմնավորմամբ:

4.12. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածը սահմանում է, որ տեղեկատվությունը առեւտրային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առեւտրային արժեք, չկա օրինական

հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

4.13. ՀՀ կառավարության www.e-gov.am կայքի “Մեկ անձից կատարվող գնումներ” բաժնում տեղադրված են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները՝ pdf տարբերակով: Նշված կայքում տեղադրված են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 2011 եւ 2013թ.թ.-ին մեկ անձից կատարված գնումների բազմաթիվ պայմանագրերի պատճեններ, ինչը վկայում է, որ ԻԱԿ-ի կողմից հայցված 2012թ.-ի պայմանագրերի կնքումից առաջ (2011թ.-ին կնքված) եւ հետո (2013թ.-ին կնքված) Նախարարության կողմից մեկ անձից կատարված գնումների պայմանագրերը հասանելի են եղել երրորդ անձանց: Ավելին, 2012թ.-ի երկրորդ կիսամյակում Նախարարության կողմից մեկ անձից կատարված գնումների չորսի պայմանագրերի պատճենները նույնպես տեղադրված ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում:

4.14. Վերը նշվածը հաշվի առնելով եւ վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի բովանդակությունը՝ գտնում ենք, որ հիմնավոր չէ ՀՀ քաղաքաշինության նախարարության այն փաստարկը, որ ԻԱԿ-ի հարցումներով խնդրված՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 2012թ.-ի երկրորդ կիսամյակում մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները հանդիսանում են առեւտրային գաղտնիք, քանի որ այդ տեղեկատվությունը (պայմանագրերի պատճենները) երրորդ անձինք օրինական հիմքերով ՀՀ կառավարության www.e-gov.am կայքից ազատորեն ստանալու հնարավորություն ունեն եւ պետությունը, ի դեմս ՀՀ կառավարության եւ ՀՀ քաղաքաշինության նախարարության, ոչ միայն միջոցներ չի ձեռնարկում դրանց գաղտնիությունը ապահովելու համար, այլ նաեւ սեփական նախաձեռնությամբ հրապարակում է դրանք www.e-gov.am կայքում:

4.15. Օգտվելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով հայցվորի համար սահմանված իրավունքից՝ վկայակոչում ենք թիվ ՎԴ/4141/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի մեկնաբանությունները, որոնք տրվել են սույն հայցի 4.13. եւ 4.14. կետերում նշված հանգամանքների հետ համադրելի հանգամանքների դեպքում: Մասնավորապես, նշված գործով հայցվորը պահանջել է տեղեկություններ, որոնք ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մերժվել են առեւտրային գաղտնիք հանդիսանալու հիմքով: ՀՀ վարչական դատարանը գտել է, որ առեւտրային գաղտնիքի վերաբերյալ պատասխանողի պահանջը հիմնավոր չէ՝ նշելով. “…առարկայազուրկ է պատասխանողի ներկայացուցչի այն պնդումները, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գույքի ձեռքբերման եւ օտարման արժեքները, ինչպես նաեւ վարձակալության համար նախատեսված արժեքը հանդիսանում է առեւտրային գաղտնիք, քանի որ սույն տեղեկատվությունը երրորդ անձինք օրինական հիմքերով այն ստանալու հնարավորություն ունեն, եւ տեղեկատվություն ունեցողը, այս պարագայում՝ Երեւան համայնքը, ոչ միայն միջոցներ չի ձեռնարկում նշված տեղեկատվության գաղտնիության պահպանման համար, այլ ավելին, նշված տեղեկությունները պարունակող ավագանու որոշումները ընդունվելուց հետո՝

մեկշաբաթյա ժամկետում, տեղադրում է քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում”:

4.16. Գտնում ենք, որ Նախարարությունը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին պարտավոր էր տրամադրել հայցվող տեղեկությունները նաեւ հետեւյալ պատճառաբանությամբ: “Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որեւէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձեւով, ապա միանման դեպքերում հետագայում եւս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Առաջնորդվելով այս նորմով եւ հրապարակայնության կանխավարկածի սկզբունքով՝ գտնում ենք, որ քանի որ նախկինում մեկ եւ բազմաթիվ անգամ պետությունն, ի դեմս տարբեր նախարարությունների, այդ թվում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության, ապահովել է մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի հրապարակայնությունը, ձեւավորել է համապատասխան վարչական պրակտիկա, ապա ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության, տվյալ դեպքում նույնպես պարտավոր է ապահովել ԻԱԿ-ի՝ 03.04.2013թ.-ի թիվ 196-ի 8 եւ 2013թ.-ի հունիսի 24-ին թիվ 201-7 հարցումներով պահանջված պայմանագրերի պատճենների հրապարակայնությունը՝ դրանք ԻԱԿ-ին տրամադրելու միջոցով:

4.17. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ տեղեկություն տնօրինողը պարտավոր է տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն: ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում հրապարակված են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 2012թ.-ի երկրորդ կիսամյակում մեկ անձից կատարված միայն չորս պայմանագրերի պատճեններ, այնինչ ըստ քաղաքաշինության նախարարության պատասխան գրությունների՝ նման պայմանագրերը 19-ն են: Ուստի, ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում ներկայացված տեղեկատվությունը չի բավարարում ԻԱԿ-ի հարցումներով խնդրված տեղեկությունների ծավալին, թերի է, ուստի լիարժեք եւ պատշաճ չէ, հետեւաբար սույն հայցով ներկայացնում ենք նաեւ լիարժեք եւ պատշաճ տեղեկություններ տրամադրելու պարտավորեցնելու պահանջ: Գտնում ենք, որ եթե դատարանը հաստատված համարի ԻԱԿ-ի իրավունքի խախտման փաստը, ապա դա բավարար հանգամանք է, որպեսզի առաջ գա դրանից ածանցվող պահանջի՝ պատասխանողին փնտրվող տեղեկությունները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի իրավաչափությունը:

4.18. Հայցվորի՝ սույն հայցով ներկայացված հայցապահանջները ապահովված են դատական պրակտիկայով, ուստի, սույն հայցը վարույթ ընդունելու իրավաչափությունը հիմնավորելու համար վկայակոչում ենք այդ թվում ՀՀ վարչական դատարանի վարույթ ընդունված այլ գործեր, որոնցում իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջը՝ որպես հիմնական պահանջ, զուգակցվել է հետեւանքների վերացման ածանցյալ պահանջի հետ:

4.19.1. Թիվ ՎԴ/0480/05/10 վարչական գործով հայցվորը ՀՀ վարչական դատարանին է դիմել ընդդեմ վարչական մարմնի՝ իր իրավունքների խախտման փաստը ճանաչելու եւ գործողություն կատարելու (տեղեկություն

տրամադրելուն պարտավորեցնելու) պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանը հայցը վարույթ է ընդունել եւ ամբողջությամբ բավարարել է այն: Այս գործով դատարանի վճռի իրավաչափությունը քննվել է ՀՀ Վճռաբեկ դատարանում, որտեղ հայցատեսակների իրավաչափությունը կասկածի տեղիք չի տվել:

4.19.2. Թիվ ՎԴ/0090/05/10 վարչական գործով հայցվորը ՀՀ վարչական դատարանին է դիմել ընդդեմ վարչական մարմնի՝ իր իրավունքների խախտման փաստը ճանաչելու եւ գործողություն կատարելու (տեղեկություն տրամադրելուն պարտավորեցնելու) պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանը հայցը վարույթ է ընդունել եւ հաստատել է կողմերի միջեւ կնքված հաշտությունը, որով վարչական մարմինը ճանաչել է իր կողմից հայցվորի իրավունքի խախտման փաստը եւ պարտավորվել է տրամադրել պահանջվող տեղեկությունները:

4.19.3. Թիվ ՎԴ/5492/05/08 վարչական գործով հայցվորը ՀՀ վարչական դատարանին է դիմել ընդդեմ վարչական մարմնի՝ իր տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանը հայցը վարույթ է ընդունել եւ ամբողջությամբ բավարարել է այն:

4.19.4. Թիվ ՎԴ/5615/05/08 վարչական գործով հայցվորը ՀՀ վարչական դատարանին է դիմել ընդդեմ վարչական մարմնի՝ իր տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանը հայցը վարույթ է ընդունել եւ ամբողջությամբ բավարարել է այն:

4.19.5. Թիվ ՎԴ/5491/05/08 վարչական գործով հայցվորը ՀՀ վարչական դատարանին է դիմել ընդդեմ վարչական մարմնի՝ իր տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանը հայցը վարույթ է ընդունել եւ ամբողջությամբ բավարարել է այն:

4.19.6. Թիվ ՎԴ/4141/05/11 վարչական գործով հայցվորը ՀՀ վարչական դատարանին է դիմել ընդդեմ վարչական մարմնի՝ վարչական մարմնի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, իր տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանը հայցը վարույթ է ընդունել եւ ամբողջությամբ բավարարել է այն:

4.20. Վերոնշյալ գործերով ՀՀ վարչական դատարանը նույն կերպ է մեկնաբանել եւ կիրառել ՀՀ Սահմանադրության, Կոնվենցիայի իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, այն է՝ վարույթ է ընդունել ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն

ստանալու իրավունքի խախտման փաստի ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջներով հայցերը: Վկայակոչված գործերով հայցվորները եւ սույն գործով հայցվորը իրավահավասար են. **res judicata** սկզբունքը պահանջում է, որ օրենքը լինի կանխատեսելի եւ կիրառվի միատեսակ, ուստի, սույն հայցով եւս ակնկալում ենք, որ պետք է վրա հասնեն իրավական նույն հետեւանքն, ինչ վերը վկայակոչված գործերով հայցվորների համար՝ իրավունքի խախտման փաստը դատարանի կողմից հաստատված համարելու դեպքում կայացվի հայցվորի համար բարենպաստ դատական ակտ:

4.21. Գտնում ենք, որ եթե դատարանը հաստատված համարի Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ տեղեկատվություն ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի խախտման փաստը, ապա, առաջնորդվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7, 223 եւ 254-րդ հոդվածների դրույթներով՝ արդարացիորեն իրավունք ունենք պահանջելու վարչական պատասխանատվության ենթարկել ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանին:

## 5. Հայցի պահանջը

Ելնելով վերագրյալից եւ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով եւ 11-րդ գլխի պահանջներով՝

## Խնդրում եմ

5.1. ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման փաստը:

5.2. Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարությանը 03.04.2013թ.-ին եւ 24.06.12.2013թ.-ին արված հարցումներով պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 03.04.2013թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 (երեսուն հազար) դրամի չափով, իսկ 24.06.12.2013թ.-ի կրկնակի հարցմամբ պահանջվող նույն տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամի չափով:

**Հետեւանքների վերացման ածանցյալ պահանջ**

5.3. Պարտավորեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը տրամադրել 2012թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները:

## 6. Տեղեկություններ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ

6.1. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից փնտրվող տեղեկատվությունը ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից չտրամադրելը վերադասության կարգով չի բողոքարկվել, քանի որ "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքը նման պարտադիր պայման չի նախատեսում:

## 7. Ապացույցների ցանկը

7.1. Գրավոր ապացույց – Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի ապրիլի 3-ի թիվ 196-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցման պատճենը (վերաբերելի է 2.1, 2.2 կետերում նշված փաստերին),

7.2. Գրավոր ապացույց – Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի ապրիլի 3-ի թիվ 196-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումը ՀՀ քաղաքաշինության նախարարությանն ուղարկելու փոստային անդորրագրի պատճենը (վերաբերելի է 2.3 կետում նշված փաստին, 4.8 կետերում նշված փաստարկին),

7.3. Գրավոր ապացույց – Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի ապրիլի 3-ի թիվ 196-8 հարցմանն ի պատասխան ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ 2013թ.-ի ապրիլի 18 թվագրված գրության պատճենը (վերաբերելի է 2.4, 2.5, 2.5.1 կետերում նշված փաստերին, 4.2, 4.6, 4.7, 4.9 կետերում նշված փաստարկներին),

7.4. Գրավոր ապացույց – ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ 2013թ.-ի ապրիլի 18 թվագրված գրության ծրարի պատճենը (վերաբերելի է 4.8 կետերում նշված փաստարկին),

7.5. Գրավոր ապացույց – Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի հունիսի 24-ի թիվ 201-7 տեղեկություն ստանալու գրավոր հարցման պատճենը (վերաբերելի է 2.6, 2.7, 2.7.1, 2.8 կետերում նշված փաստերին),

7.6. Գրավոր ապացույց – Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի հունիսի 24-ի թիվ 201-7 տեղեկություն ստանալու գրավոր հարցումը ՀՀ քաղաքաշինության նախարարությանն ուղարկելու փոստային անդորրագրի պատճենը (վերաբերելի է 2.9 կետում նշված փաստին, 4.8 կետերում նշված փաստարկին),

7.7. Գրավոր ապացույց – Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի հունիսի 24-ի թիվ 201-7 հարցմանն ի պատասխան ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ 2013թ.-ի հուլիսի 12 թվագրված գրության պատճենը (վերաբերելի է 2.10, 2.11, 2.11.1 կետերում նշված փաստերին, 4.6, 4.7, 4.9 կետերում նշված փաստարկներին),

7.8. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի հունիսի 24-ի թիվ 201-7 հարցմանն ի պատասխան ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ 2013թ.-ի հուլիսի 12 թվագրված պատասխանին կից ներկայացված գրության պատճենը (վերաբերելի է 2.12 կետերում նշված փաստին, 4.9 կետում նշված փաստարկին),

7.9. Գրավոր ապացույց – ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ 2013թ.-ի հուլիսի 12 թվագրված գրության ծրարի պատճենը (վերաբերելի է 4.8 կետում նշված փաստարկին),

7.10. Գրավոր ապացույց – ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենների հրապարակումը հավաստող պատճեններ 2011, 2012 եւ 2013թ.թ.-ի համար՝ 3 էջ (վերաբերելի է 4.13, 4.14, 4.17 կետերում նշված փաստարկներին):

## 8. Հայցին կցվող փաստաթղթերը

8.1. Սույն հայցի 7.1-7.10 կետերում թվարկված ապացույցները,

8.2. Սույն հայցը եւ կից փաստաթղթերի պատճենները ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ստանալը հաստատող փաստաթղթի պատճենը,

8.3. Սույն հայցը եւ կից փաստաթղթերի պատճենները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստանալը հաստատող փաստաթղթի պատճենը,

8.4. Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից իր ներկայացուցչին տրված լիազորագրի պատճենը,

8.5. Գեւորգ Հայրապետյանի անձնագրի պատճենը,

8.6. Միջնորդություն պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին,

8.7. Միջնորդություն հայցի քննության ժամկետների մասին:

Հացվոր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյան

Հայցվորի ներկայացուցիչ՝ Գեւորգ Հայրապետյան

03.09.2013թ., ք. Երեւան